ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հունիսի 2020թ. թիվ 479-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄՇՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2006Թ. ԱՊՐԻԼԻ 28-Ի ԹԻՎ 128-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզում մահվան դեպքերի նկատմամբ մշտական հսկողություն իրականացնելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Լոռու մարզի առողջապահական ընկերություններում արձանագրված հիվանդանոցային մահերի կլինիկական և ախտաբանաանատոմիական ախտորոշումների տարամիտման դեպքում կազմակերպել քննարկումներ և ներկայացնել հաշվետվություն:

3. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2006 թվականի ապրիլի 28-ի «Լոռու մարզում մահվան դեպքերի նկատմամբ մշտական հսկողություն սահմանելու նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 128-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունիսի 26
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2020թ. հունիսի 26-ի
թիվ 479-Ա որոշման

Կ Ա Զ Մ

Լոռու մարզում մահվան դեպքերի նկատմամբ մշտական հսկողություն իրականացնող հանձնաժողովի

Լ.Վարդանյան - հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ

Վ.Մկրտչյան - հանձնաժողովի քարտուղար, «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն, Լոռու մարզի գլխավոր ախտաբանաանատոմ

Հանձնաժողովի անդամներ.

Հ.Ղազարյան - «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի ախտաբանաանատոմ

_____ - համապատասխան ոլորտի մարզի գլխավոր մասնագետ կամ այլ համապատասխան մասնագետ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

06/26/20

X

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ